

ԳԼՈՒԽ Թ .

ՅԱԿՈՒ ԶՈՒՂԱՅԵՑԻ

ԵՒ

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Յակոբ Կաթողիկոս ազատօրէն կը յայտարարէր իր կաթողիկէ դաւանանքը, որովհետեւ այն ժամանակ Հայոց մէջ միշտ աւելի գետին կը շահէր այն համոզումը՝ թէ Կաթողիկէ Եւրոպան, և մասնաւորապէս Ֆրանսան, պիտի ազատէր Արեւելքի քրիստոնեայ ազգերը ստրկութեան ճիրաններէն: Արդարեւ նոր խաչակրութեան մը գաղափարը ներշնչած էր Աղեքսանդր Է. Քահանայապետը եւ այդ նպատակաւ կ'ողբերէր Ֆրանսայի Լուդովիկոս ԺԴ. Թագաւորը: 6 Ապրիլ 1670ին Հայր Սենդենեան կը գրէր Գուլպերի՝ թէ «սոսկ Ֆրանսայի Թագաւորը կրնայ փրկել քրիստոնեաները»: «Պոլսոյ Յոյն Պատրիարքին կողմէ Աթէնքի եւ Էտիրնէի մետրապօլիտները Լուդովիկոսի կը տանէին 1672ին Կարվինի վարդապետութիւնը դատապարտող կոնդակը: Անտիոքի եւ Հալէպի յոյն եւ ասորի պատրիարքներն ալ կը գրէին Ֆրանսայի Թագաւորին՝ թէ կը պայքարին նորազանդ կրօնին դէմ» (1):

(1) Լեո, Հայոց Պատմ. Գ. հատ. Երեւան